— Չեն պսակւում:

— Հա՛: Մեր գիւղում մի տղայ ու աղջիկ կային, խաչ-աւէտարան համբուրեցին, քոյր — եղբայր դարձան. յետոյ նրանց հէրն ու մերն ուզեցին պսակել նրանց. նրանք չպսակուեցան, ասեցին՝ մեղք է. թէեւ մինչեւ հիմա էլ սիրում են մէկմէկու:

— Պսակուելու ժամանակ էլ խաչ-աւէտարան են համբուրում:

— Բայց քոյր-եղբայր չեն դառնում:

— Բա ի՞նչ են դառնում:

— է՛հ, դու չե՞ս իմանում...

— Իմանում եմ: Դու շատ չար աղջիկ ես, Մարօ, ինչո՞ւ այնպէս արեցիր, երեւի Մարգարիտը բարկացաւ, որ նրա երեսը ինձ ցոյց տուեցիր:

— Նա չի բարկանայ: Մարգարիտը լաւ սիրտ ունի. նա քեզ շատ է սիրում. երբ գնանք աստուածածին, ես ճանապարհին նրան քեզ հետ կը խօսացնեմ: Այնտեղ քոյր-եղբայր դարձէք, Ֆարհատ: Յետոյ նա քեզ հետ միշտ կը խօսի, երեսը չի թաքցնի, բայց հիմա կարգ չէ, ամաչում է:

— Դու երբ որ հարս կը դառնաս, դո՞ւ էլ երեսդ կը ծածկես, մարդու հետ չե՞ս խօսի:

— Բա ինչպէ՞ս. դրա համար են հարս դառնում:

— Այդ բլբլացող լեզուդ ինչպէ՞ս պէտք է լուռ պահես:

— Կը սովորեմ: Ախար տղամարդը կծեծէ, երբ կնիկը իր երեսը ուրիշին նշանց տալու լինի:

— Ես չեմ ծեծի...

Մարօն ծիծաղեց.

— Ուրիշներն ի՞նչ կ'ասեն, չե՞ն ասի՝ անամօթ հարս է:

Ներս մտաւ Հասօն: Նա իմանալով, որ մենք վաղ առաւօտեան պէտք է գնանք, եկել էր տան համար կարգադրութիւններ անելու:

Թէեւ խիստ դժուարութեամբ, այնոամենայնիւ ես կարողացայ Հասօին համոզել, որ Մարգարիտին եւս մեզ հետ ուղարկել: Այժմ դժուարութիւնը մնում էր մի ուրիշ բանում: Ուխտաւորների թոի վրայ երկու հոգի եւս աւելացաւ՝ Մարգարիտը եւ փոքրիկ Սալբին, որ լսելով մօր գնալը, լաց եղաւ, թէ ինքն էլ է ուզում սուրբ աստուածածինը տեսնել: Ուրեմն մեր ամբողջ քարաւանը կազմւում էր հինգ հոգուց: Նրանց թոի համեմատ գրաստները չորս հատ էին՝ իմ ու Հասօի նժոյգները, մի մատակ ձի եւ մի աւանակ: Աւանակը